

թիւ մը: Խորագրերը կարմիրով, զարդա-
գիր չունի: Իւրաքանչիւր հատուածի ըս-
կիցքի թուղթին վրայ պարապ տեղ թող-
ուած է զարդախորանի մը եւ զարդագրի
մը համար, սակայն չէ նկարուած: Ձեռա-
գրին մէջ վարդ մը էջեր բոլորովին եր-
կրաչափական ձեւերու եւ զծաղրութեան
տրուած են խիստ խնամքով եւ զգուշու-
թեամբ, կարմիր եւ մանրակապոյն մեկան-
ներով: Երկրաչափական զծաղրութիւն-
ները թուագրուած են արաբական կամ
հայագիր:

Ինչպէս ըսի, գրիչին հետ թարգմանիչն
ալ կը մնայ անծանօթ: Գործը չունի ան-
ուանաէջ, թէեւ պարապ թողուած է էջ
1ա: Էջ 2բ. ունի երկրաչափական պատ-
կերներ, իսկ էջ 3ա. 7 տող պարապ թո-
ղելի վերջ, անտարակոյս ծաղկելու հա-
մար, մեղի կը տրուի Ա. խորագրերը
ԳՈՐԾԱՌՈՒԹԻՒՆՔ ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹԵԱՆ,
Գործառութիւն, մէկ էւ կը սկսի «(Ք) ար-
շիլ զուղիդ գիծ մի ի կետէ միոջէ առ միւս
իմն կետ, զոր նշանակեալ է ոք ի վ(ե)-
ր(այ) գետնի միոյ: Նախ եւ առաջ եթէ
երկու կետքն նշ(ա)նե(ա)լ են ի վ(ե)ր(այ)
թըղթոյ կ(ա)մ թէ ի վ(ե)ր(այ) տափակ
գետնի ս(ա)կ(ա)ւ երկ(ա)րութե(ան),
ո(ր)պ(էս) ա, բ, ամ(էն) ոք լաւ գիտէ,
թէ միայն հ(ա)րկ(ա)ւ(ո)ր է յ(ա)րմարեւ
զուղիդ կանոն ի վ(ե)ր(այ) երկու նշա-
նեալ կետիցն ա, բ, վ(ա)ս(ն) քարշիւոյ
անդ զուղիդ գիծ մի, գէպէշիւով միով,
կ(ա)մ սուր ծայրիւ միով, զոր իջուցես
ի կետէն առ կետն ընդ երկ(ա)րութի(ւ)ն
կանոնին»:

Այսպէսով տուած կ'ըլլամ նաեւ նմոյշ
մը թարգմանութենէն: Լեզուն մաքուր է,
թէեւ վան դէպէշիւր (կաւիճ), փէրկէլ
(կարկին), եւն...:

Ձեռագիրս կը պարունակէ Եւկլիդէայ
առաջին վեց դրուխները, որոնք կը վեր-
ջանան էջ 235բ.: Հոս հաւանաբար թարգ-
մանիչէն կ'ըսուի:

«Ամ(ենայն) երկրաչափք ի բաց թողուն
դ7, 8, 9, եւ 10 դիրքն, վ(ա)ս(ն)դի ոչինչ
կապակցու(թ)ի(ւն) ունին ընդ վերոյ ե-
րե(ա)լ վեց դրքիցն, այլ ս(ո)ք(ա) բա-
ւական են ընդ հետեւեալ 11 եւ 12 գըր-
քիցն, վ(ա)ս(ն) հասկանալոյ դամ(ենայն)
մաթեմատիկայ անուանե(ա)լ դիտու-
թի(ւն)ան»:

11 եւ 12 հատուածները տրուելի վերջ
ձեռագիրը վ'աւարտի էջ 273բ. կարմրաւ
վերջ երկրաչափութեան եւզիտին:

* * *

Եթէ ուսուցչապետ Արմենակ Ա. Շա-
ղոյեանի ըսածը իրաւացի է որ ցարդ
մեր հին ձեռագիրներուն մէջ (Պաւլայի
թիւ 178, Տիւրինդէնի թ. 74, Երեւանի
թ. 4106 եւ Վենետիկի Միլիթարեանց)
գտնուած երկրաչափաբանական պատա-
ռիկը նախա-Եւկլիդէան է եւ հաւանաբար
ցարդ որ եւ է լեզուով անյայտ Լեւոնի
կամ Թեւդիոսի Մադնեսիացւոյ երկրաչա-
փական գործէն, եւ դարձեալ եթէ Գրի-
գոր Մադիստրոսի վերագրուած եւ իրմէ
ալ հաւաստուած Եւկլիդէայ հայերէն
թարգմանութիւնը անգոյ է ու կամ ցարդ
չէ գտնուած, այն ատեն իմ հայերէն ձե-
ռագրաց հաւաքածոյիս Եւկլիդէայ Եր-
կրաչափութեան հայերէն թարգմանու-
թեան այս ձեռագիրս միակ հայերէն
թարգմանութիւնը եւ միակ ձեռագիրը
կ'ըլլայ, արժանի մանրապատում քննու-
թեան:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԶԱՅՈՑ ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑԻՆ

(Շար. տես «Բազմավեպ» 1959, թ. 3-5, էջ 49)

ԳԼՈՒԽ Գ.

ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑԻ Զ-Ը ԴԱՐԵՐՈՒՆ

Զարգացումը. — 1. Գիշերային. — 2.
Առաւօտեան. — 3. Արեւագալ. — 4. Գ. Զ.
Թ. Ժամեր. — 5. Երեկոյեան. — 6. Խա-
ղաղական. — 7. Շարականներ. — Պատկեր:

Այս շրջանիս քննութեան մեր աղբիւր-
ներն են 1) Մովսէս Քերթոզի «Յաղագս
կարգաց եկեղեցւոյ» համառօտ գրութիւ-
նը, է. դարէն. 2) Յ. Օճնեցիի կամ Դուր-
նի 719ի ժողովին կանոնները. 3) Ստեփա-
նոսի Սիւնեաց եպիսկոպոսի (մեռ. 735ին)
«Պատմառ աղօթից. 4) Յունաց ժամագիր-
քը հայերէն թարգմանութեամբ:

Ասորական, յունական ու հայ աղօթա-
մատոյցներու զարգացման շրջանն է այս,
որոնք անհաւասարութեան եւ անորոշու-
թեան միջակէն կ'ելլեն ու կը ստանան
հաստատուն կերպարանք: Ասորիներու
ժամագրքին կարգաւորութիւնը կը վերա-
գրուի Իշխոյար Գ. կաթողիկոսին (647 -
658) ըստ Բառաբարի (8): Նոյն ժա-
մանակ՝ մանաւանդ աւելի կանուխ է յու-
նականին կազմութիւնն ալ, որ հետզհետէ
զարգացեր է, հեռանալով նախորդ շրջա-
նէն՝ ժամերու թիւով, սաղմոսներու ըն-
տրութեամբ ու յաւելուածներով, եւ եր-
րորով՝ որոնք այս շրջանիս կ'երեւին, ինչ-
պէս պիտի տեսնենք: Ասկէ զանազան
փոխառութիւններ ունի եւ մերը, որոնք կը
կանխեն ու ծանօթ են մեր յիշեալ երեք
վարդապետներուն, եւ բոլորն ալ միասին
առնուած են այս շրջանիս: Այդ նորու-
թիւններու հաւանական հեղինակ են եր-
կու կաթողիկոսներ, Եզր (630-641) եւ

Ներսէս Շինող (641-661), վերջինս նաեւ
դաստիարակուած Յունաց քով. եւ եր-
կուքն ալ հետեւող քաղկեդոնական վար-
դապետութեան ու սերտ կցորդութեան
մէջ Հռոմէոսի հետ: Բնական էր ու-
րեմն՝ որ ի տես միւս եկեղեցիներու շարժ-
ման՝ բարդաւաճելու հասարակաց աղօթ-
քը, հրապուրուէին իրենք եւս՝ ճոխա-
ցընելու մեր ժամագիրքը. մանաւանդ որ
իրենց անունին հետ վապուած են արդէն
անոր որոշ մասերը, ինչպէս պիտի տես-
նենք: Եւ իրենց առաջնորդ առին՝ ըսինք՝
յառկապէս յունական աղօթամատոյցը,
որուն աղերսը հայկականին հետ շատ
զգալի է:

1. Գիշերային ժամ. ա. — Առաջին ու
զլիսաւոր նորոյթն եղաւ՝ սաղմոսներու-
թեան հայ եւ արտաքին դրութեանց խառ-
նումը իրարու հետ. այսինքն՝ պահելով
սաղմոսականոններու ամբողջական բաժա-
նումը օրուան ժամերուն վրայ, աւելցան
եւ քաղուածներ սաղմոսներէն՝ նմանու-
թեամբ յոյն ժամագրքին: Ունինք հոս
նախ Գիշերային առաջին քառամասն սաղ-
մոսը, «Տէր զի՞ բաղում» (Գ), զոր կը յի-
շէ Իմաստասէրը, գրելով այսպէս. «Ար-
ժան է ի դիշերին, յորժամ ժողովին ի
պաշտօնն, նախ զառաջարանիցն ասել ըզ-
չորեսին սաղմոսն...: Առաջին՝ գերբորդ
սաղմոսն. երկրորդ՝ զութաներորդ եւթնե-
րորդն. երրորդ՝ զհարիւրերորդ երկրոր-
դն. չորրորդ՝ զհարիւրերորդ քառասնե-
րորդ երկրորդն»: որոնցմէ վերջ կը նշա-
նակէ Մանգակունիի քարոզը՝ Զարքու-
ցեպալս (28): Որով այդ սաղմոսները զե-
տեղուած էին հոն՝ ուր պիտի մնան միշտ,
միւս մասերն ալ պահելով իրենց նախկին

կարգը: Օձնեցիէն առաջ, Ձենոր Գլախացի, է. դարուն, ակնարկելով Անտոնի եւ Կրոնիդեայ սաղմոսերգութեան « ընդ առաւօտն », անոնց բերանը կը դնէ նոյն սաղմոսերէն վերջինին երկու տուները, « Լսելի արա ինձ առաւօտուն » եւ « Հոգի քո բարի առաջնորդեսցէ » (41), ինչ որ դուշակել կու տայ միւս զուգակից սաղմոսերու զոյուրթիւնն ալ:

Այս չորս սաղմոսները կը գտնուին նաեւ յունական ժամագրքին Առաւօտեան պաշտամունքին մէջ, ոչ սկիզբը, այլ աւելի ներս: Ունին նախ « Տէր, եթէ զլըթունս իմ բանաս » կցորդը, կրկնուած ինչպէս մեր քով, եւ ապա Գ, (Լ, կը), Ձէ, ՃԲ, ՃԽՍ սաղմոսները: Կցորդը անկասկած ընդունուեցաւ այդ սաղմոսներուն հետ, զոր փոխառուն դրաւ ժամերգութեան սկիզբը, այդպէս հայացնելով յունականին ոճն ալ, որ բոլոր պաշտամունքը կը սկսի ՂԳ սաղմոսի ճրգ. տունով՝ երեք անգամ կրկնուած: Մեր Գիշերայինի այդ կցորդը կ'երաշխաւորէ՝ թէ ասոր հետ հաստատուեցան միւս ժամերու սկզբնական կցորդներն ալ: Նոյն ժամագրքին առնուեցան - զի անծանօթ են նախորդ չըջանի վկայութեանց մէջ - նաեւ յարակից չորս սաղմոսները, զիւղելով երկու փակագծեալները, եւ յունականին կարգով, եւ միայն տեղը փոխելով. այսինքն՝ փոխանակ Առաւօտուն՝ Գիշերը դնելով, եւ պաշտամունքի սկիզբը: Հետաքրքրական է Ձենորի « ընդ առաւօտս » ըսել տալն՝ Յունաց նրման. պատճառը, զի յիշեալ երկու սուրբերը կեսաւրացի յոյներ էին, եւ պատմիչն իրենց ոճով աղօթել կու տայ:

Ստ. Սիւնեաց կը զարտուղի սաղմոսներու թուին մէջ, ըսելով. « Նախերգականին հնգիւք սաղմոսին », ուր անոնց մեկնութեան մէջ կը խօսի չորսի մասին (Ա., 361 - 362): Կարելի է՝ թէ առանձին սաղմոս կը հաշուէ « Տէր, եթէ զլըթունս իմ » կըցորդը. վասնզի Օձնեցիի նշանակած չորսն հաստատուն կը մնայ այնուհետեւ հետագոյն ժամագրքերու եւ մեկնիչներու քով եւս, որոնցմէ եւ Գր. Տաթեւացին 1408ին

կը շարունակէր տեսնել « չորս փոխ սաղմոսքն » (Ամբ. 335), կամ « չորս փոխքն եւ վաթսուն եւ վեց տուն » (Սղմ. 165):

Նկատմամբ անոնց կիրարկման կերպին՝ իմաստասէրը կը գրէ՝ « միարանութեամբ » որ է՝ բոլորը միասին, եւ « ի թիւ՝ խոնարհ ձայնիւ »: Եւ արդ « ի թիւն » հեռացումն է նախկին ոճէն, որ սկսած է հոս պարզուել. ուր կեղծ Օձնեցին (Թ. դարուն) մեկնելով Սիւնեցիի « Նախերգական » բառը, կ'ըսէ՝ թէ « հինգ սաղմոսիւքն նախ երգին » (82). մեկնութիւն՝ որ նիւթական բացատրութիւնն է « Նախերգական »ին, եւ « ի թիւն » կը մնայ միշտ, ինչպէս պիտի տեսնենք: Այնպէս կը թուի՝ թէ սաղմոսներ աւելցնելով պաշտամունքին մէջ՝ ստեղծեցին նաեւ ի քիւլըսը, որպէսզի չձանրաբեռնէին աղօթքը: Այս չըջանէս կը թուի նաեւ սաղմոսակառուներու կիրարկումը ի թիւ, որուն յիշատակութեան կը հանդիպինք աւելի ուշ:

Բ. - Կնճոռոտ հարցի մը գլխաց կը դնէ մեզ Յ. Իմաստասէր՝ նկատմամբ սահակեան չորս աղօթքներուն, ծանօթներէն տարբեր աղօթքներ նշանակելով՝ այսպէս. 1) Տէր Աստուած մշտնջենաւոր, հանդիստ՝ Շնորհատու բարեաց. 2) Ի գիշերի եւ ի տուրնջեան, հանդիստ՝ Հովիւ քաջ. 3) Անկեալ եմք առաջի բո, հանդիստ՝ Քում ամենագոր տէրութեանդ. 4) Օրհնեալ ես տէր Աստուած... հանդիստ՝ Քեզ յանձն առնեմք զանձինս մեր...», յետին զոյգը պարզ զրեւով եւ նախորդները՝ համառօտ (31): Այս չորսէն միայն ի գիշերի եւ իր հանդիստը կը համաձայնին մեզի ծանօթներուն հետ: Անկեալ եմք կը յիշեցնէ Թ. ժամու նախասկիզբն աղօթքը, որ կայ նաեւ ԺԱ. դարու Մաշտոցին « Հայր առնելոյ » կանոնին մէջ. իր հանդիստը՝ Քում ամենագոր՝ կը թուի Տէր երկնի եւ երկրի աղօթքին հանդիստը: Իսկ Տէր Աստուած - Շնորհատու անյայտ է. եւ Օրհնեալ ես - Քեզ յանձն առնողը եւ հետեւեալ բովանդակութեամբ.

« Օրհնեալ ես, տէր Աստուած մեր, որ եւ զմեզ զմեզաւորս արժանի արարեր փա-

ռաւորել զքեզ: Ընկալ բարերար եւ մարդասէր տէր, զամենեցուն մեր աղաչանս, զխնդրուածս, զխոստովանութիւնս, զզոհացողութիւնս, եւ շնորհաւ ամենեցուն մեզ զքո առատ ողորմութիւնդ եւ զթութիւնդ: Մի՛ թողուր, տէր, զթողովուրդս քո, եւ մի՛ մատներ ի սպառ վասն անուանքո՛ւ մի՛ ըստ մեզս մեր առնելը զմեզ. եւ մի՛ ըստ անօրէնութեան մերում հատուցանել մեզ. այլ արա առ մեզ զողորմութիւն քո ի հաղարս եւ ի բերս: Ձեքո զմեզ յամենայն որողայթից սատանայի, եւ փոխեա զմեզ յարքայութիւն միածնիդ քո տեսնել մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Հանգիստ: Քեզ յանձն առնեմք զանձինս մեր, Աստուած ամենակալ, Հայր տեսնել մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ի բարձունս բնակեալ էս, եւ զխոնարհս տեսանես յերկինս եւ յերկրի: Հայեաց, տէր, յաղօթս մեր եւ ի պաղատանս: Մի՛ ցրեր զուխտ քո, եւ մի՛ մերժեր զմեզ ի ժառանգութեանէ քումմէ. այլ ըստ առատ քում բարութեանդ արժանաւորս արա զմեզ ծառայս քո անճառ լուսոյդ երկնից արքայութեանդ՝ Յիսուսի Քրիստոսի տեսնել մերով, ընդ որում քեզ Հօր եւ սուրբ Հոգւոյդ վայել է փառք իշխ...» (31):

Հ. Գաթըրճեան այդ նորածեւ աղօթքները Սահակի համարեցաւ, եւ սովորականները Մանդակունիին (Պտր. 171), ինչ որ սակայն անընդունելի է շատ տեսակէտներով: 1) Ողջամիտ Մանդակունիին չէր պատշաճել ջնջել իր մեծ նախահօր շարադրածները, եւ իրենները դնել անոնց տեղը: 2) Հասարակաց աղօթքի այն մասերը, որ առաջին անգամ կիրարկութեան մասն, այնքան խոր արմատ ձգեցին՝ որ ժամանակը չէր կարող ջնջել կամ փոխանակել զանոնք, ինչպէս վկայեցին սաղմոսներու հին ու նոր թարգմանութիւնները. որով սահականները աւելի հաստատուն պիտի մնային Աղօթամատոյցին մէջ՝ քան կարծեցեալ մանդակունեանները, ինչ որ ալ ըլլային: 3) Այդ նախնականները մեզի ծանօթներն էին, զորս տեսաւ ու մեկնեց եւ Խոսրով՝ Օձնեցիէն

երկու դար յետոյ. ապացոյց՝ թէ կը շարունակուէին մնալ անշարժ Աղօթամատոյցին մէջ: 4) Ասոնցմէ մէկուն՝ Տէր տուրնջեանի հետքը նշմարեցինք Աղաթանգեղոսի մէջ, որուն ընդլայնումը կանուխ էր քան Մանդակունին. հետեւաբար նոյն եւ անոր զուգակից Տէր երկնի աղօթքներէն օգտուեցաւ նոյն հայրապետն ալ իր ցերեկեայ աղօթքներուն մէջ: 5) Ուրեմն իմաստասէրին յիշած անծանօթները ոչ Սահակի եւ ոչ Մանդակունիին, այլ նորաստեղծ էին. բայց եւ յայտնի փոքր ի շատէ, որով կը բաւականանայ յիշատակելով միայն, եւ մին ամբողջութեամբ կրճելով. ապացոյց՝ թէ հասարակաց ծանօթ չէր այդ: Եւ այն դիւրութեամբ՝ որով ստեղծուեցան, նաեւ կորուստի մատուցան մինչեւ Խոսրով, որ սովորականներուն վրայ ուրիշ անսովոր մ'ալ ինքն ունի, ինչպէս պիտի տեսնենք. որպէսզի համոզուինք՝ թէ Օձնեցիին ժամանակ եւ յետոյ բաղմացած էին զիշերային այդ աղօթքները, եւ հայրապետն անոնցմէ ընտրեց ու կոչեց ինչ որ իրեն յարմար թուեցաւ. Համարձակելով անոնց հետ կապել Սահակի կամ Մանդակունիի անուններն ալ, մինչդեռ վստահութեամբ վարուեցաւ յայտնի մասերուն հետ:

Գ. - Ի շարունակութիւն եւ ի կարգաւորութիւն վկայաբանական ընթերցումներու, Սողոմոն՝ հայր Մաքենեաց ուխտին՝ 747 թուին յորինեց իր անուանի Տօնականը, որ ըստ յիշատակարանին « ունի զընթերցումն զիշերային պաշտաման ըզտէրունական տաւնից, եւ զյիշատակ սրբոց մարգարէից եւ զառաքելոց եւ մարտիրոսաց եւ հայրապետաց եւ թաղաւորաց », ինչպէս իրապէս ալ կը տեսնուի Մշոյ Առաքելոց ուխտին անուանի օրինակին մէջ՝ 1204ին, որմէ համառօտուած է Ս. Ղաղարու թ. 653: Դարձեալ զիտնալու ենք՝ որ Գիշերային աղօթքը այս շրջանին յատուկ էր կիրակիներու եւ կարեւոր տօներու միայն: Որով այս ամէնը վերապահուած էր այդ հանդիսական օրերուն:

2. Առաւօտեան ժամ. — ա. — Այստեղ ունինք՝ իբրեւ ուրիշ նորոյթ մը՝ Լցաֆ առաւօտու — Ուրախ եղաք — Հայեաց Տէր — Զգործս ձեռաց քառատուն սաղմոսը, աւարտած Փառք Հօրով, որ յար եւ նման կը գտնուի յոյն ժամագրքին մէջ եւս (74), եւ անկասկած անկէ առնուած է: Յունականը դրած է զայն յետ Փառք ի բարձունսի, առաւօտեան երգերու կարգին, իսկ հայը՝ պաշտամունքի սկիզբը, նման դիւերայինին, անոր յաջորդեցնելով սաղմոսականոնն ու միւս մասերը: Զարմանալի է՝ որ սա պակաս է Մաքենեաց Սըրատներու, 1284ի, Օշինի, Մարիունի եւ թ. 252 ժամագրքերուն մէջ, եւ կը տեսնուի նախ 1445ի օրինակին մէջ: Աւելի մոտեցած կը թուի ժամանակ մը, քան թէ յետոյ առնուած յունականն:

Երեց Մանկանց, Աստուածածնի ու Դաւթի երգերը կը պահեն իրենց տեղն ու կարգը, եւ Օձնեցիէն ու Սիւնեաց եպիսկոպոսէն կը կոչուին Հարցն (Հարցին) եւ Գործք (Գործոց. Օձ. 19), Մեծացուցէ, եւ Տէր յերկնից (Տէր յերկնեցոյն, Տէր յերկնեցոյն. Օձ. 19, 28): Իրենց վրայ կը յաւելու այժմ Ծ սաղմոսը, որուն տեղն ալ կը ճշտէ երիցադոյն վկայ Մովսէս Քերթոզ, «նախկին ասել՝ Ողորմեա ինձ Աստուած —, եւ ապա համարձակել եւ ասել՝ Օրհնեցէք գտէր յերկնից...» (10): Կը կոչուի Ողորմեաց (Ողորմեցին, Ողորմեցոյն. Օձ. 19, 28. զՈղորմեացն, զՈղորմեայն. Ստ. Ա. 485, 487): Իր աղբիւրն ալ ըլլալու է յոյն ժամագրքը, որ ունի զայն Գիւրի, Առաւօտու, Երրորդ ժամու, եւ մեծ ու փոքր յետ ընթերցաց պաշտամունքներու մէջ. բայց Առաւօտուն զայն դրած է մարգարէական օրհնութեանց սկիզբը, որոնցմէ վերջ կու գան Երեց Մանկանց եւ միւս հանապազօրեայ երգերը: Իսկ Պաղեստինի մէջ նոյն սաղմոսն ըստ Կասիանոսի կը գտնուէր ուրիշներու հետ՝ այս կարգով. Ծ, ԿԲ, ԶԹ, ԶԽԸ, ԶԾՅ: Որով իր տեղը մեր Աղօթամատոյցին մէջ հայկական է:

Մովսէս Քերթոզ խօսելով լուր օրերու

մասին, չէ յիշած Մեծացուցէն, որովհետեւ հինէն ի վեր յատուկ էր՝ ըսինք՝ կիրակի օրուան, ինչ որ կը հաստատէ եւ իմաստասէրը, գրելով այսպէս. «Իսկ կիրակէին աւուր առաւօտինքն... զկնի Հարցինն Մեծացուցէ ասել» (29). կրկնուած եւ Սիւնեցիէն. «յաւուր մեծի յարութեանն տեսնն Մեծացուցէ սրբոյ կուսին» (Ա. 485): Կը յարատեւէր այդ ոճը մինչեւ Շնորհալին, որ առ Ալեքս թղթին մէջ (1155) պատասխանելով Յոյներու ամբաստանութեան՝ թէ Հայք Աստուածածնի երգը չունէին եկեղեցւոյ մէջ, կ'ըսէ՝ թէ «զբանս նորա ոչ ի լոկ աւուրսն ընդ երից մանկանցն եւ ընդ մարգարէին Դաւթի երգեմք բանից, այլ ի կիրակէս միայն եւ ի տօնս տէրունականս» (Ընդհ. 90). ուրեմն ընդարձակուած եւ միւս փրկչական յիշատակներուն վրայ: Եւ կը շարունակուի մինչեւ ԺԳ. դար ալ, ուր «Կարդ մեկն. ժամու աղօթից» կը տեսնէր ու կը վկայէր թէ Մեծացուցէն կ'ըսուէր կիրակի օրը (309):

Օձնեցի հայրապետն ուրիշ ճշդում մ'ալ ունի: «Եւ, կ'ըսէ, թանց սորա (Օրհնեցէք մանկունք) առաւօտին ասացաւ սաղմոսքն թուով վեց»։ Իմանալով Հարցը, Գործքը, Ողորմեայն, եւ Տէր յերկնիցին երեք փոխերը, որոնք բոլորն ալ եղանակաւոր էին. «զերկունս ապաշխարութեան եւ աղօթից», որ էին Հարցն եւ Ողորմեայն, եւ ատոր համար կ'երգուէին «ողբաձայնեալ»։ Իսկ միւս չորսը, որ է Գործք եւ Եռամասեան Տէր յերկնից, «պարզաբար առ ի նուագերգութիւնսն առեալք», այսինքն երգելի զուարթ եղանակաւ (19, 20), ըստ որում օրհնութիւն էին:

Եւ դարձեալ՝ թէ «Զերից մանկանցն ի բերան աննելով նուագեմք զօրհնութիւն» (18), յետ որոյ «մեծագոյն հնչմամբ աղագակեմք... ասելով. Օրհնեցէք ամենայն զործք տեսնն զտէր» (19), Մովսէս Քերթոզի ըսածին պէս՝ թէ «Վերագոյնեմք

1. Բէռնէր, Ա. 143:

աղագակելով... Օրհնեցէք ամենայն զործք տեսնն» (91):

Բ. — Յետ Հարցին՝ Ստ. Սիւնեաց կը նշանակէ. «յորոյ վերայ քարոզ եւ ապա աղօթքն» (Ս. 483), նոյնպէս ակնարկութեամբ յիշուած իրեն հետեւող կեղծ Օձնեցիին ալ թ. դարուն (85): Քարոզն է բնականաբար Եկեղափս ամենեքեան, զոր տեսաւ ու մեկնեց Խոսրով Անձեւացին (132): Իսկ աղօթքն էր՝ ըստ Սիւնեցիի՝ «Աստուած քաւեա զիս գլեղաւորս», զոր կը սահմանէ «պաղատանս խոնարհութեամբ ամենայն քրիստոնէից յաւուրս աղուհացիցն՝ աղօթքն հանապազօր», որով կ'աղաչէին «զերբեակ միութիւն Աստուածութեան» (487, 489), եւ զոր կը կրկնէ եւ կեղծ Օձնեցին՝ նմանողութեամբ. «Աստուած քաւեայն զխոնարհութեան պաղատանս հանապազօր Երբեակ միութեանն մատուցանել արժան է ամենայն քրիստոնէից» (86): Շեղադրածը պիտի կազմէ յետոյ Յօդեա տէր մաղթանքին վերջաբանը՝ «Աստուած քաւեա զիս զմեղաւորս»: Իսկ «Երբեակ միութեանն» ակնարկել կը թուի անոր փրկից կրկնութեան: Եւ Եթէ սա «աղուհացից» յատուկ էր, անորոչ կը մնայ միւս օրերու մաղթանքը:

Գ. — Ստ. Սիւնեցին կը ճանչնար՝ ըսինք՝ «զՈղորմեայն (փոխը)՝ նոյնպէս քարոզն եւ աղօթքն»՝ որ անոր կը յաջորդէին (Ա. 485): Եւ անշուշտ անոնք իսկ զորս մեկնեց Անձեւացին. քրդ. «Երկըր պաղեմք քեզ տէր Աստուած մեր», որ է ծանօթը, եւ աղ. «Ողորմած մարգասէր եւ քաղցր տէր, քաւեա եւ թող զմեզս մեր: Արա արժանի փառաւորել զՀայր եւ զՈրդի...» (150, 151), որ յետոյ կ'առնէ այժմեան ձեւը. «Ողորմութեամբ եւ զըթութեամբ քո լուր մեզ տէր» եւ այլն, եւ որ 1284ի ժամագրքին մէջ արդէն «Պահոց» յատկացուած է:

Դ. — Տեսանք Փառք ի բարձունսի նախկին տեղն ու ձեւը, որմէ կը հեռանայ յոյն ժամագրքին օրինակը, շարադրութեամբ եւ երկմասն յօրինուածով (73), որուն վրայ ձեւուած է յայտնապէս մեր արդի

կիրարկածն ալ (Երկրորդ մասին «Օրհնեալ տէր» տան երիցս կրկնութեամբ հանդերձ, որ կայ 1284ի եւ յաջորդ ժամագրքերու մէջ, եւ ինչ ինչ տարբերութիւններով յունականն): Մենք ունինք երդիս յիշատակութիւնը է. դարէն սկսեալ, բայց առաջին բառերով միայն, — եւ հոլովուած «զիսառ ի բարձունսն» (Օձ. 28). «Փառք ի բարձունսն» կամ «Փառս ի բարձունսն» (կեղծ Օձ. 104), — որմէ չէ կարելի դադարաւոր առնել կաղմութեան նըկատմամբ, որուն առաջին անգամ կը հանդիպինք Մովսէս Եղնկացիի մեկնութեան մէջ (1255ին) երկու մասերով հանդերձ, եւ բոլորովին համաձայն այժմեան բնագրին (157-207): Նկատելով նախ երկրորդ մասին մեծ հնութիւնը Յոյներու քով, եւ երկրորդ՝ թէ ինչպէս այս շրջանիս կատարուեցան զանազան փոխառութիւններ անոնց աղօթամատոյցէն, ինծի շատ հաւանական կը թուի՝ թէ ատոնց ժամանակակից էր փառաբանութեանս երկրորդ հայացումն ալ՝ արդի ձեւով:

Մեղի ծանօթ է այժմ կիրարկման եղանակն ալ, որ էր «միաբանաբար նուագել» ըստ Օձնեցիին (19, 28), կամ «միաձայնութեամբ երգել» ըստ Ստ. Սիւնեցիի (Ա. 489), ինչ որ կարող է եւ հին ըլլալ, բայց մինչեւ այդ ատեն անյիշատակ մընացած: Նոյն սովորութիւնը կը շարունակուէր տակաւին ԺԲ. դարուն, ըստ Մաքենեաց Սրատներուն՝ թէ «Փառք ի բարձունսն յատեանն ասն միաբան, եւ ի հանդիսի աւուրն ժամահարաւ»: Գր. Սիւնեացին կ'ըսէ. «Ի Փառք ի բարձունսն կարի ահիւ եւ ջերմ սիրով կաց՝ յատեանն երթալով. զի յայնմ տեղով հանապազ շնորհս տայ Աստուած երկիւղածաց իւրոց» (415): Նոյնը կը վկայէր եւ Մովսէս Եղնկացին 1255ին՝ թէ «Ունիմք զայս աւանդութիւն՝ միաբանութեամբ եւ բարձրագոյն ձեռնակաւ երգել» զայն (155): Նոյնը կը հաստատէր եւ Տաթեւացին 1397ին. «Փառք ի բարձունսն յատեանն եւ համաձայն երգել» (Սղմ. 509. Հրց. 628):

Իբրեւ այս երգին մասը եւ միասին հա-

յացած է փոխառութեան շրջանին մէջ իր հետագայ համառօտ մաղթանքն ալ. «Փառք պատիւ եւ զոհութիւն ի բարձունս Հօր...», որ կայ յոյն ժամագրքին մէջ եւս, եւ ուր կը փոխանակէ զՓառք ի բարձունսն աղուհացի եւ ալ օրերուն՝ ուր այս՝ վերջինը կը զեղչուի (74)։ զայս տեսաւ ու մեկնեց Սոսրով եւս (208)։

Իմաստասէրն հոս կը դնէ «լստ իւրաքանչիւր աւուր զկցորդսն՝ զոր առեալ է ի սաղմոսացն. երկուշարթույն՝ «Լոյս տուր տէր աչաց իմոց» եւ այլն (28)։ անոնք իսկ՝ զորս կ'երգենք ցարդ պահոց օրերուն. եւ այս շրջանիս ամէն օր, տալաւին սուրբերու տօները բաղմացած չըլլալով։ Իսկ շարաթ օր՝ «Առաքեալ, տէր, զլոյս քո» (29), յատուկ մարտիրոսաց՝ որ անվրէպ կը տօնուէին այդ օր։ Եւ կիրակի օրուան համար կը գրէ՝ թէ «արժան է զինի Փառք ի բարձանցն յարութեան առեալ» (30), որ կը յիշեցնէ մեր «Չարութիւն փրկչին օրհնեսցուք»։ Հայրապետը ասոնցմէ զատ ուրիշներ չի ճանչնար, որովհետեւ չկային. եւ Սիւնեցի կը կոչէ զանոնք «Առաւօտին երգս» (որ) զաւուրն ցուցանէ խորհուրդ» (489)։ Յիշուած ու մեկնուած են եւ կեղծ Օձնեցիէն (87-89), եւ կան 1318ի եւ հետագայ մանրամասնութիւններու ու ժամագրքերու մէջ։ Սաղմոսատուններէ կազմուած այս երգին զապաւարն յունականէն է, որ փոխանակ մերինն՝ ունի «Լցաք առաւօտու», ինչպէս ըսինք վերեւ, «Բարի է խոստովան լինել» եւն. (74-75)։

Ե. — Կարգը կու գայ «բարոյութեան եւ աղօթիցն» ըստ Օձնեցիի (29), որոնց բովանդակութիւնն ալ կը զգացնէ Ստ. Սիւնեցիին, ըսելով առաջինին համար՝ թէ «զղոհացողականն ծաւալեցուցանէ բարոյ, աղաչել զամենակալն Հայր՝ թէ որ այսպիսի սքանչելիօք պահպանեալ բարձրացոյց զազգս մարդկան, ... եւ յարգեան ժամանակս պահեսցէ զեկեղեցի իւր սուրբ»

եւ այլն (Ա., 489-90), ինչ որ ակնարկութիւն է Փառաւորեցում քարոյին, որ կը շարունակէ՝ «զամենակալն Աստուած ըզՀայր...», զոհանալով զնմանէ՝ որ պահեսց... եւ առաջնորդեաց մեզ ի խաւարէ ի լոյս, ի մահուանէ ի կեանս, ... պարսպեալ պահեսցէ զթողովուրդս իւր» եւ այլն։ Ասիկա տալաւին միակ քարոյն է ժամերգութեան այս տեղը, եւ պիտի մընայ հաստատուն, զոր պիտի մեկնէ նաեւ Սոսրով (214)։

Իսկ աղօթքին համար կ'ըսէ Սիւնեցիին՝ թէ քահանայն «ի վեր հանէ զաղօթս ժողովրդեանն առ Աստուած, հաստատուն լինել ի կամս պատուիրանի նորա, ... առ ի լինել տաճար մաքրական» եւն. (490), ուր կը տեսնուի մեր երկամսեայ աղօթքը՝ Գոհանալք գեղն, որու մէջ կը խնդրուի. «զօրացո եւ զմեզ տէր ի պահպանութիւն պատուիրանաց քոց, ... որպէս զի ... լիցուք տաճար եւ բնակարան» եւ այլն, զոր նոյնպէս պիտի մեկնէ Անձեւացիին (218)։ Բարոյն եւ աղօթքը շինուած են Մանդակունիի շարադրածներուն ձեւով։ Դիտելի է որ երկուքն ալ անյիշատակ թողուած են Մովսէս Գերթոյէն. արդեօք իրմէ վերջ յօրինուեցան։

Գ. — Նոյն Գերթոյն յետ Փառք ի բարձունսն կը յիշեցնէ Սուրբ Աստուածը. «զարմէիցն զհնչումն Բրդեն զերեքին սրբասացութիւնն» (10), զոր Յ. Իմաստասէրը կը դնէ «զինի քարոյութեան եւ աղօթիցն» (22), «Սուրբ, սուրբ, սուրբ, տէր զօրութեանց» հնազոյն երգին, որ կայ Առաք. Սահմանադրութեանց մէջ. երկրորդ ձեւն է ատիկա, զոր պատմիչները Կոստանդնուպոլսոյ Պրոկղ պատրիարքին կ'ընծայեն, եւ Թէոփանոս նոյնիսկ 438ին կը դնէ՝ հրաշալի պատահարի մը առթիւ²։ Սակայն Ը. զարու այդ վկայութիւնը պատմական արժէք չունի։ Իսկ հայ միջնադարեանները անոր հեղինակ առասպելաբանեցին Յովսէփ Արիմա-

թացին, եւ Թովմաս առաքեալը՝ Փառաւորեալ կցորդին եւ այլն³, զոր Սիւնեցիին կու տար Կիւրեղ Աղեքսանդրացիի (Բ., 137), երբ երեքսրբեանն իսկ քեռ զոյու-թիւն չունէր։ Իր առաջին յիշատակութիւնն ունինք 451ին՝ Քաղկեդոնի ժողովին մէջ, ուր արեւելեան եպիսկոպոսները պահանջեցին Դիոսկորոսի անկումը, այդ պահանջման մէջ խառնելով աս ալ. «Աստուած սուրբ, Աստուած հօր, Աստուած անմահ, ողորմեա մեզ»⁴։ Անդրանիկ ձեւն է այս, որ յետոյ կը փոխուի այսպէս. «Սուրբ Աստուած, սուրբ հօր, սուրբ անմահ, ողորմեա մեզ»։ Եւտիքական Պետրոս թափիչն եղաւ՝ որ 481ին աւելցուց անոր մէջ «որ խաչեցար վասն մեր», ինչպէս կը վկայէ Թէոդորոս Վերծանող՝ 2. զարու սկիզբը՝ եւ ուրիշներ, եւ որուն զէմ հակառակեցան բոլոր ուղղափառները⁵։ Երգիս առաջին տեղն էր պատարաւին մէջ⁶, ուր եւ կը մնայ ցարդ։ Իսկ թէ երբ մտաւ ժամերգութեան մէջ՝ ստոյգ տեղեկութիւն չունինք։

Հայոց քով կը հանդիպինք այս երգին առաջին յիշատակութեան՝ 2. զարու կիր-սուն, երբ Ասորիները առ Ներսէս Աշտարակեցի նամակին մէջ կը գրեն՝ թէ երեքսրբեանը կ'երգէին՝ հանդերձ «որ խաչեցար վասն մեր» յաւելուածով. եւ կաթողիկոսը կը պատասխանէ՝ թէ եւ Հայք կ'ըսէին անոնց պէս՝ Սուրբ Աստուած, սուրբ եւ հօր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար...։ Իր յաջորդը Յ. Գաբրիէնացի նոյնը կը կրկնէ՝ Աղուաններու ուղղած իր նամակին մէջ։ Իսկ Վրթանէս Գերթոյ (604-606) զայն գիտէր յունական ձեւով. «Սուրբ Աստուած, սուրբ հօր, սուրբ անմահ», եւ ապա «որ խաչեցար»⁷։ Առանց չաղկապին՝ նախնականը ըլլալու է մեր քով. եւ չաղկապն յետագայն՝ նախորդ վկայութեանց մէջ։ Այս վկայութիւնները կը հաստատեն Բրդիս զօյութիւնը մեր մէջ 2. զարուն՝ ասորական արդեցութեամբ եւ

յաւելուածով. բայց չեն ճշդեր՝ պատարաւը՝ թէ աղօթքի միջոց։ Սակայն է. զարուն կայ նաեւ պաշտամունքին մէջ, ինչպէս Մովսէս եպիսկոպոս վրաց (606-ին), կը գրէ՝ թէ կ'երգէին «յարձակ աւուրս առաւօտու եւ երեկոյի։ Իսկ ի յաւելութեանն՝ առաւօտու եւ երեք ժամու (որ է ի պատարաւի) եւ երեկոյի երիցս Սուրբ Աստուած»⁸, որուն համաձայն էր հայ սովորոյթն ալ, ըստ վկայութեան Մովսէս Գերթոյի, որ վերեւ նշանակեց անոր ժամն ու տեղն ալ, խօսելով առաւօտեան մասին միայն։ Աւելի տեղեկութիւն կու տայ մեզի Իմաստասէրը, յիշելով անոր երգումն «յերեկոյինս եւ յառաւօտինս» եւ «յորժամ պատարաւ մատչի» (28), կրկնուած եւ Սիւնեցիէն այժմեան ձեւով (Ա., 491), մինչ յոյն աղօթամատոյցը զայն ունի բոլոր ժամերուն մէջ։ Եւ Օձնեցիին զարձեալ՝ թէ «զխաչեցարն երիցս անգամ զհետ բերել՝ ըստ երիցս անգամ կրկնելոյ սրբասացութեանն» (28). եւ թէ «զերեքսրբեանն երգել զփառաբանութիւն՝ հանդերձ սրբոյ Աստուածածնին կցորդին» (29)։ Ուրեմն այս երգը կը հնչէր Առաւօտու եւ Երեկոյի ժամերուն, ամէն անգամ կրկնուելով երիցս, ինչպէս եւ յոյն ժամագրքին մէջ (3). Եւ արդէն ունէր փառաւորեալ մաղթանքն ալ, Սիւնեցիէն կոչուած Փառաւորն (Բ., 137), եւ ստեղծուած՝ զօրացնելու համար երգիս ի զէմս Գրիստոսի Բրդունելու զապաւարը, որ կը պակսի յունականին մէջ։ Նուազելու կերպն էր՝ ըստ Իմաստասէրին՝ «միաբանական ձայնի» կամ «զուգաձայնեալ» (20, 22), այն է՝ բոլորը միասին։

«Սակա ժողովոյ որ եղեն ի Հայք» անվաւերականը յանուն Օձնեցիի, ստեղծուած Մանափերտի ժողովին յետոյ (726) զոր կը յիշէ, եւ նախ քան Ստ. Ասողիկ (1004) որմէ կը յիշուի, կը գրէ՝ թէ եզր «զխաչեցարն յերիս սրբասացութեանցն ու-

2. Տիւրմուտ, Յիշատակք, ԺԴ, 713, 715-16։

3. Միթթար Գոչ յԱրարատ, 1906, 121. Գր. Տաթևացի՝ ընդ Սոսրովու, 432։

4. Հեփելէ, Բ., 685։

5. Տիւրմուտ, 714. Կարբու, 2, 1613։

6. Կարբու, անդ։

7. Գիրք թղթոց, 53, 56, 83, 207։

8. Գիրք թղթոց, 123։

ընդհանուր. եւ զինքն նորա կաթողիկոսք վեց կարգեալք մինչեւ ցնդիա՝ որ էր աւանդութեամբ նոցա»⁹, թէպէտ Եղիա հակաքաղկեդոնեան նկարագրուած է Մ. Կաղանկատուացիի լրացուցիչէն (236-44): Օձնեցիի ժողովին ալ կը վկայէ « Խաչեցար»-ի զեղջման, սահմանելով՝ թէ «Պարտ եւ արժան է զխաչեցարն և քրիստ անդամ զհետ բերել, ... եւ մի՛ նուազեցուցանել եւ նուազ դտանիլ ի շնորհաց խաչին Քրիստոսի» (26): Ուրեմն կային «նուազեցուցիչք» երգողներու՝ ըստ Սիւնեցիի:

Աղօթքի գրեթէ վերջաբանն էր այս երգը սոյն շրջանիս, եւ նոյն հայրապետի ըսածին պէս՝ թէ՛ լուր եւ միանգամայն կիրակի օրեր «Արժան է... յառաւօտինս զինքն ամենայն պաշտամանն նուազել ըզ՝ Սուրբ Աստուածն, եւ ապա զհետ բերել... դարեւազալին սաղմոս» (28) որ է Մ. Քերթովին Օրհնեցեալ մանկունքը (ՃԺԲ), որով կը կնքէ եւ նա պաշտօնը (10), եւ երկուքն ալ կը խօսին լուր օրերու մասին: Իսկ Կիրակի օր հայրապետը զայն կը յիշէ իր կցորդով հանդերձ. «զոր Եղիցի անուն տեառն ասել սկսեալ են ի ժամանակացն Եզրի կաթողիկոսի» (30), որ է 630-641 տարիներու մէջ. զանազանութիւն՝ որ ցարդ կը մնայ:

Չեմ գիտեր՝ ինչ կ'իմանայ Բաւոմշտարկ՝ այս սաղմոսը սահմանելով «արդի յաւելուած» մը (18), ըստ որում հեռացած իր նախկին ասորական տեղէն, որ էր Տէր յերկնիցին առջեւ: Նոյն փոխը յոյն աղօթամատոյցը դրած է ընդհակառակն թ. ժամուն մէջ (121), եւ անկէ առաւ Եզր, առանց կապուելու ժամուն հետ: Ասիկա ալ կը կիրարկէին, կ'ըսէ Իմաստասէրը, «ըստ դասուց վերաձայնութեամբ» (20, 29, 30), այսինքն դաս առ դաս երգելով բարձրաձայն, ինչպէս հանդիսական սաղմոսին վրայ եւս նոյն բացատրութիւնը հոմանշաբար ըսուած է «նուազել» (22, 29): Եւ հոս կ'աւարտէր Առաւօտեան պաշտօնը, քանի որ այս սաղմոսն էր իսկական «կատարումն աղօթիցն» ըստ Սիւնեցիի (Ա, 492). եւ կոչուած

«արեւազալի սաղմոս», որովհետեւ այս ժամու աւարտումը արեւածաղին կը հանդիպէր, ինչպէս վկայեց Ղեւոնդ:

3. - Արեւազալ. - ա. - Սիւնեաց եպիսկոպոսը, որ առաջին յիշատակողն է այս ժամու աղօթքներուն, կ'ըսէ թէ մարդ «ահիւ սթափեալ աղօթէ ի ժամուս յայսմիկ» (Ա, 493), եւ առանձին ղրուել մը կը նուիրէ այս նիւթին, բայց առանց յիշելու որ եւ է աղօթք: Սակայն առանց սեպհական աղօթքի ժամերգութիւն չկար: Եւ նոյն Ստեփանոսի հետեւող կեղծ Օձնեցիին կ'ընդլայնէ անոր մտածութիւնն ու կ'ըսէ. «Կարեցան ի ժամուն յայնմիկ աղօթք՝ իրրեւ արժանի լինել մեծի առաւօտի լուսոյ ծագմանն» (29): Հարկ էր՝ որ ըլլային, վային եւ յայտնի են հոս աղօթքի քանի մը մասեր, եւ նախ քան սկզբնական երեք սաղմոսատունները. Եղիցի անուն - ի նա օրհնեցին - Օրհնեալ Տէր Աստուած (ՀԱ, 18-20), աւարտած սովորական Փառք Հօրով. եւ արդիւնք յունական ուձին ընդունելութեան, զոր տեսանք եւ ըսինք՝ թէ նոյն կցորդը կը պահանջուի մեր բոլոր ժամերուն սկիզբը, ինչպէս կան արդէն:

Բ. - Նախկին վեց ժամերն իրենց կցորդաւոր քարոզը եւ երկմասն աղօթքն ունէին: Պատշաճ ու բնական էր՝ որ ատոնցմէ գտնուէին նաեւ նորակերտ Արեւազալին ու Խաղաղականին մէջ, որ քիչ թէ շատ միւսներուն վրայ ձեւուած են: Եւ արդարեւ կան, եւ այնչափ հին են՝ որ Խոսրով տեսաւ ու մեկնեց զանոնք: Եթէ արդէն կան Խոսրովի օրով, ըլլալու էին եւ սկիզբէն, եւ ես համոզուած եմ ատոր: Ժամուս սեպհականը կը սկսին «Յարեւելից մինչեւ ի մուտս» բառերով: Քարոզը մեզի ծանօթին հետ հաւասար է Անձեւացիին քով (242): Իսկ աղօթքը մեծապէս կը տարբերի կաղմով, որ ըստ մեզի նախկինն էր, ըստ որում իր հետ չունի երկրորդութիւն, ինչպէս ունէին գիշերայինն-

9. Գիրք թղթոց, 222:

ըր, որպէսզի կատարած լի տեղի ըլլար: Ահա իր բնազիրը:

«Յարեւելից մինչեւ ի մուտս արեւու օրհնեալ ես, տէր, եւ եղիցի անուն քո օրհնեալ յայսմ հետէ մինչեւ յաւիտեան: Որ բարձր ի մէջ զխաւարն կուրութեան, եւ ծաղեցեր ի մեղ զլոյս աստուածգիտութեան՝ ի յիմարեալ միտս եւ ի մահկանացու մարմինս մեր: Եւ այժմ աղաչեմք եւ խնդրեմք ի բարեբարութենէդ քումմէ, արա արժանի սրբութեամբ տեսանել զճառագայթս արեգականն, խաղաղութեամբ անցուցանել զերկայնութիւն տուրնջեանս, եւ հասանել ի պաշտօն երեկոյին՝ յերկրպագութիւն եւ ի փառաբանութիւն ամենասուրբ Երրորդութեանդ, որում վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ...: Խաղաղութիւն ամենեցուն: Առաջի քո, տէր, եւ առաջի փառաց քոց եւ առաջի մեծի տէրութեանդ քո խոնարհեցուցանեմք ծառայք եւ աղախնայք զղլուխս մեր: Դու, տէր Աստուած մեր, ձգեալ զամենազօր աջ քո եւ օրհնեալ զմեզ: Օրհնեալ եւ բաւական արա զսոսա, զի յամենեցունց յամենայն ժամ փառաւորեսցի ի ծառայս եւ յաղախնայս ամենասուրբ անուն քո: Եւ քեզ օրհնութիւն եւ զփառս հանցուք Հօր եւ Որդւոյ...» (244-247):

Գ. - Այս ժամուն մէջ կան փոքր քարոզներ եւ աղօթքներ ալ, որոնք անծանօթ էին այս շրջանիս, եւ տակաւին Խոսրովի եւս, ինչպէս կը գրացնէ Մովսէս Եգնկացի, զանոնք մեկնելով ու թողլով առանց անուան, եւ մեծերուն վրա հիներուն հետ կապելով Անձեւացիի անունը: Սակայն պաշտամունքը մէկ քարոզով եւ աղօթքով չէր կարող մնալ. այլ ունենալու էր իր

զուգահից ու ժամանակակից Խաղաղականին պէս յօրինուած մը. եւ տարբերէն յունական Արեւազալին՝ որմէ ծնաւ մերն ալ, ինչպէս նաեւ Խաղաղականը իր մասերով: Մեր համոզումով՝ զէթ այն փոխերը՝ որ կան միանգամայն յոյն եւ հայ աղօթամատոյցներու մէջ, առաջինն անցած են վերջնոյն, ինչպէս եւ միւս ժամերու վերաբերեալները: Ըստ այսմ ունինք հոս Աստուած Աստուած իմ (ԿԲ), առնուած յունականին Առաւօտեանէն (41), եւ յարած արդէն Լուր Աստուածին (ԿԳ). Աստուած յօգնել ինձ (ԿԴ) յոյն շաբաթու Միջագիշերէն (32), եւ Աստուած մեր ապաւէն (ԽԵ) անոր Արեւազալի Միջաժամէն (82), եւ զուգուած մեր Տէր հովուեսցէին հետ (ԻԲ). սաղմոսներ՝ որոնց կը հանդիպինք առաջին անգամ 1284ի ժամագրքին մէջ՝ տկնարկութեամբ, եւ ամբողջապէս՝ Մարիունի օրինակին մէջ:

Դ. - Ատոնցմով հանդերձ՝ տակաւին աղբատ էր այդ պաշտօնը: Մենք նկատեցինք սաղմոսականոններու բաժանումը օրուան նախկին վեց ժամերուն վրայ, եւ նոյն դրութեան շարունակութիւնը նաեւ այս շրջանիս: Նորակերտ Արեւազալը չէր կարող զուրկ մնալ անոնցմէ, եւ ուսում գործել տալ: Որով կանոնները տեղափոխութիւն մը կը կրէն, եւ Մաքենեաց Խրատները ԺԲ. դարուն այս ժամերգութեան հետ ալ կը վապեն կանոն մը (Յաւ. Ա), բնականապէս հինգերորդը, զետեղելով մեծ քարոզէն առաջ: Այն հարկը՝ որ այդ փոփոխումն ընել տուաւ, կար եւ այս շրջանիս. եւ որ եւ է անտեղութիւն չկայ զայն զնելու այս ժամանակէն իսկ, եւ ապա շարունակուած:

Հ. ՎԱՐԳԱՆ ՀԱՅՈՒՆԻ

(Շարունակելի)